# ԶԵԿՈՒՅՑ

## ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

## 2018–2021 ԹԹ.

Խմբագիր՝ Լուսինե Հակոբյան

Հեղինակ՝ Քրիստինե Խանումյան

*Պատրաստվել է Չեխիայի Հանրապետությունում գործող «Քաղհասարակության Պրագայի կենտրոն»-ի ֆինանսական աջակցությամբ*

2021

*2018 թվականի հեղափոխությունից հետո քարոզչական առումով բարդ ժամանակներ են սկսվել Հայաստանում իրավապաշտպան որոշ կազմակերպությունների եւ անձանց համար:*

*Մինչեւ 2018–ը հիմնականում այլ անձանց իրավունքների համար պայքարողներից ոմանք իրենք հայտնվեցին սեւ եւ կեղծ ագրեսիվ հակաքարոզչության թիրախում:*

*Հայաստանի նոր՝ լեգիտիմ իշխանության պայմաններում շատ իրավապաշտպաններ հայտնվեցին խոցելի կարգավիճակում, գործնականում իշխանությունների եւ իրավապահների կողմից որեւէ ջանք չի գործադրվել քաղհասարակության դեմ իրականացվող այդ գրոհներին վերջ տալու ուղղությամբ:*

*Թիրախավորված քարոզչությունը ոչ միայն չի դադարում, այլեւ լրատվամիջոցների անգամ կարճ մոնիթորինգը ցույց է տալիս, որ այն ավելի ու ավելի է սահագնանում, ծրագրավորված բնույթ է ստանում՝ վերջնանպատակ ունել ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ հնարավոր կլիներ լռեցնել քաղաքացիական հասարակությանը՝ այս կամ այն կազմակերպության գործունեությունն արգելելով:*

# ԹԻՐԱԽՆԵՐ

Սեւ, ագրեսիվ քարոզչության եւ ատելության խոսքի թիրախում հիմնականում հայտնվել են իրավապաշտպան գործունեություն ծավալած, կամ ծավալող այն անձինք, որոնք հանրային կարծիք ձեւավորողներ են:

Թիրախավորվում են նաեւ կոնկրետ գործընթացների (քաղաքական, դատական, իրավական) ժամանակ աչքի ընկնող քաղաքացիական հասարակության այն ներկայացուցիչները, որոնք իրենց գործողություններով կամ խոսքով կարող են ազդեցություն ունենալ գործընթացների վրա :

2018 թվականի հեղափոխությունից հետո հատկապես թիրախավորվել են հետեւյալ իրավապաշտպանները.

**Լարիսա Մինասյան** — «Բաց Հասարակությունների հիմնադրամներ»–ի Հայաստանյան գրասենյակի նախկին ղեկավար (մինչեւ … 2021 թ.)

**Արթուր Սաքունց** — Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ

**Լեւոն Բարսեղյան** — Գյումրիի Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ

**Լուսինե Հակոբյան** — «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան կազմակերպության նախագահ, փաստաբան

**Դանիել Իոաննիսյան** — Իրազեկ քաղաքացիների միավորում հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող

**Նինա Կարապետյանց** — Հելսինկյան Ասոցիացիայի փաստաբան, մոնիթորինգային խմբի ղեկավար

**Տիգրան Եգորյան** — «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան կազմակերպության ավագ իրավախորհրդատու, փաստաբան

**Ժաննա Ալեքսանյան** — իրավապաշտպան

**Լառա Աիարոնյան** — «Կանանց ռեսուրսային կենտրոնի» համանախագահ

**Մարիաննա Գրիգորյան** — «Մեդիալաբ» կայքի խմբագիր

**Վարդգես Գասպարի** —իրավապաշտպան, ակտիվիստ

**Դավիթ Պետրոսյան** — «Ռեստարտ» նախաձեռնության անդամ

# ՀԱԿԱՍՈՐՈՍԱԿԱՆ ԱՐՇԱՎ

Իրավապաշտպանների դեմ թիրախավորված, լայնածավալ, համակարգված արշավը սկսել է 2018 թվականի հեղափոխությունից անմիջապես հետո՝ այսպես կոչված ՎԵՏՕ շարժման կողմից, ինչից հետո այդ արշավին միացան նաեւ այլ անձինք, կազմակերպություններ: ՎԵՏՕ–ն հիմնադրել է եւ դրա ամենառանցքային մասնակիցը Հայաստանի նախկին Ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի նախկին խորհրդական, PR–ի մասնագետ, նախկին իշխանությունների հետ կապերի ունեցող Նարեկ Մալյանը: Հենց նրա ղեկավարած ՎԵՏՕ–ի կողմից շրջանառության մեջ դրվեց եւ ապա նախկին իշխանությունների այլ ներկայացուցիչների, աջակիցների, ԶԼՄ–ների եւ ակտիվիստների կողմից լայնորեն տարածվեց քաղաքացիական հասարակության դեմ արշավի, այսպես կոչված «սորոսականներ» տարբերակը: Սա մի բացահայտ քարոզչական մեթոդ էր, որի արդյունքում հանրության մոտ քաղհասարակության ցանկացած ներկայացուցիչ պիտի ընկալվեր որպես «սորոսական», որը «նպատակ ունի կործանել ցանկացած հայկական բան»;

*Գործընթացն իրագործվեց հետեւյալ փուլերով.*

Սկզբում տարատեսակ ակցիաներով, ասուլիսներով, ուղիղ եթերներով, հարցազրույցներով, այսպես ասած, ստեղծվեց հակահայաստանյան եւ հակահայկական

«չարիքի եւ թշնամու» կերպարը՝ ի դեմս միլիարդատեր Ջորջ Սորոսի, որի Բաց Հասարակություններ հիմնադրամները գրասենյակ ունի եւ դրամաշնորհային ծրագրեր է իրականացնում նաեւ Հայաստանում:

Մի քանի ամիս շարունակ գրեթե անդադար իրականացվող տարբեր քարոզչական մեթոդների միջոցով, (որոնք լայնորեն լուսաբանվել են նախկին իշխանությունների հետ առնչություն ունեցող ԶԼՄ–ներով), փորձ է արվել հանրության մոտ շրջանառելի դարձնել այն միտքը, որ Սորոսը համագործակցում է Ադրբեջանի եւ Թուրքիայի իշխանությունների հետ, եւ աջակցում է նրանց՝ «Հայաստանը, ՀՀ բանակը, հավատքը, եկեղեցին, հայկական ընտանիքը, Արցախը վերացնելու» ծրագրին: Գրեթե ամեն օր նմանաբովանդակ տեղեկատվություն է տարածվել թե ԶԼՄ–ներով, թե սոցիալական հարթակներում:

Հաջորդաբար թիրախավորվեցին բուն հիմնադրամն ու հիմնադրամի աշխատակիցներն, ու հիմնադրամից դրամաշնորհներ ստացող որոշ իրավապաշտպաններ անձնապես՝ որպես այդ «ծրագիրը» Հայաստանում անմիջականորեն իրականացնողներ:

Տեղեկատվական արշավի թիրախում հայտնվեցին նաեւ իշխանությունները, այս պարագայում թիրախավորողները սկսեցին շրջանառել, թե «սորոսականները հեղափոխության միջոցով Հայաստանում հասել են իշխանության, փորձում են իշխանական լծակներով իրականացնել Սորոսի Հայաստանակործան ծրագրերը»:

Եւ ի վերջո ամբողջությամբ թիրախավորվեց քաղաքացիական հասարակությունը. այն իրավապաշտպանները, որոնք այս կամ այն ձեւով իրենց գործունեությամբ խանգարում էին նախկին իշխանություններին, հռչակվեցին «սորոսականներ» եւ Հայաստանում Սորոսի ծրագիրն իրագործողներ՝ անկախ այն հանգամանից, արդյո՞ք նրանք երբեւէ առնչվել են ԲՀՀ–ի հետ, թե՞ ոչ:

# ԽՏՐԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՐՈՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեեւ առաջին հայացքից տպավորություն էր ստեղծվել, թե որոշ շրջանակներ գաղափարական անզիջում պայքար են մղում հենց «Սորոսի գաղափարների» եւ հետեւաբար նրա ստեղծած հիմնադրամից դրամաշնորհ ստացած անձանց, կամ այդ հիմնադրամի հետ առնչություն ունեցող բոլոր անձանց դեմ, իրականում, սակայն, տեղի է ունենում խտրական «հակասորոսական» պայքար. մի դեպքում, որպես «սորոսական» կարող են թիրախավորվել հիմնադրամի հետ երբեւէ առնչություն չունեցած, կամ քիչ առնչություն ունեցած անձանց, մեկ այլ դեպքում՝ բացառապես քաղաքական դրդապատճառներով երբեւէ որեւէ խոսք չասել հիմնադրամի հետ նույնատիպ կապեր ունեցող անձանց հասցեին: Օրինակ՝ իշխանություններին որպես «Սորոսական» թիրախավորեցին այդ թվում նաեւ Արմեն Գրիգորյանին Անվտանգության Խորհրդի քարտուղարի պաշտոնին նշանակելու կապակցությամբ: Որպես Գրիգորյանի «սորոսականության» ապացույց՝ հիշատակում էին այն, որ վերջինս աշխատել է (ԲՀՀ հետ հանագործակցո՞ղ, թե դրամաշնորհ ստացած) «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» կազմակերպությունում:

Որեւէ թիրախավորման, սակայն, չարժանացավ Հայաստանի նախկին վարչապետ, Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով պայքարի դուրս եկած 17 կու-

սակցությունների վարչապետի միասնական թեկնածու Վազգեն Մանուկյանի փեսան՝ Սարհատ Պետրոսյանը. վերջինս հեղափոխությունից հետո նշանակվել էր ՀՀ Կադաստրի կոմիտեի ղեկավար, իսկ մինչ այդ եղել էր «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ»–ի խորհրդի անդամ:

Երբեւէ որպես «սորոսական» չի թիրախավորվել եւ չի թիրախավորվում ԲՀՀ կողմից պարբերաբար դրամաշնորհներ ստացող իրավապաշտպան, նույն Վազգեն Մանուկյանի աներորդին՝ «Հայաստանի Հելսինկյան կոմիտե»–ի ղեկավար Ավետիք Իշխանյանը: Հակասորոսական թիրախավորված այս պայքարում չեն հիշատակվել նաեւ մի շարք այլ անձինք, կազմակերպություններ եւս, որոնք նույնպես ֆինանսավորում են ստացել ԲՀՀ–ից. օրինակ՝ Ռոբերտ Քոչարյանի փաստաբան Հայկ Ալումյանը, ԱԺ նախկին նախագահ Արա Բաբլոյանը, նախկին գլխավոր դատախազ Գեորգ Կոստանյանը, ՀՀԿ–ական նախկին պատգամավորներ Կարեն Բեքարյանն ու Հայկ Բաբուխանյանը, «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունը, «Հետք» հետաքննող լրատվական կայքը եւ այլն:

Քաղաքացիական հասարակության դեմ ագրեսիվ քարոզչությունը համընդհանուր Սորոսականության դաշտ տեղափոխելը, ըստ երեւույթին, մեկ այլ թաքնված պատճառ էլ ունի. առանձին պետությունների, կամ կազմակերպությունների (ԵԽ, ԵՄ, ԵԱՀԿ, ԱՄՆ, Բրիտանիա, Նորվեգիա եւ այլն) դեմ անվանական հակաքարոզչություն չկա թերեւս այն պատճառով, որ այդ հակաքարո-

զի հեղինակները հույս ունեն, որ նորից կարող են գալ իշխանության եւ այդ ժամանակ ստիպված պետք է լինեն նորից համագործակցել այդ կառույցների եւ պետությունների հետ, ուստի շատ ավելի հեշտ է որպես քաղաքացիական հասարակության խորհրդանիշ ստեղծել մեկ անձի կերպար, եւ պայքարել այդ կերպարի դեմ, ինչը նաեւ մանիպուլյացիաների լայն հնարավորությունների դաշտ է բացում:

# ՈՎՔԵՐ ԵՆ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՂՆԵՐԸ

Քաղաքացիական հասարակության դեմ կազմակերպվող արշավը այս կամ այն ձեւ ղեկավարվում է նախկին իշխանությունների կողմից: Իրավապաշտպանների դեմ այս կամ այն կեղծիքը տարածում են նախկին իշխանություններին սատարող, կամ նրանց քարոզչությամբ զբաղվող անձինք, այնուհետեւ այդ կեղծիքները շարունակվում են շրջանառվել նախկին իշխանությունների հետ առնչություն ունեցող ԶԼՄ-ների միջոցով:

Դրանք են.

Ռոբերտ Քոչարյանի հետ առնչվող անձինք եւ ԶԼՄ-ները

Սերժ Սարգսյանի եւ նրա փեսայի հետ առնչվող անձինք եւ ԶԼՄ-ները

Պրոռուսական գործիչներ եւ ԶԼՄ-ներ

Իրավապաշտպանների դեմ ամենաշատ հրապարակումներն ու հաղորդումները կարելի է դիտարկել հետեւյալ

Կայքերում՝

**168.am, Hayeli.am, Yerevantuday.am, Panorama. am, Yerkir.am, News.am, Armeniasputnik.am, Politik. am, Yerkirmedia.am, Past.am, Aysor.am, Antifake.am, Hraparak.am, Blognews.am, Irates.am, 7or.am, Tert.am,**

**Zham.am, Times.am, Analitik.am, Armlur.am, Ankakh.am**

Հեռուստալիքներով՝

**Թիվի 5, Հ2, Արմնյուզ, Երկիր Մեդիա**

Հիշյալ ԶԼՄ–ների մի մասը առնչություն ունի նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի, մի մասը՝ նախկին նախագահ Սերժ Սարգսյանի եւ նրա փեսա Միքայել Մինասյանի հետ:

168 լրատվական կայքն ու թերթը ղեկավարում է Հայաստանի Ժուռնալիստների միության նախագահ Սաթիկ Սեյրանյանը:

Հեղափոխությունից հետո Ռոբերտ Քոչարյանը մի քանի անգամ հարցազրույցներում խոսել է ԲՀՀ–ի մասին, իրավապաշտպաններին անվանելով՝ «սորոսյատա», ասել, թե «Սորոսի կողմից ղեկավարվող կազմակերպության և նման այլ կառույցների գաղափարներն ու արժեքները Հայաստանը տանում են դեպի ինքնաոչնչացում»:

Այն, որ Ռոբերտ Քոչարյանը կրկնում էր արդեն հայտնի դարձած քարոզչական մտքերը, ցույց է տալիս, որ իր համախոհների, եւ քարոզիչների շրջանում իրավապաշտպանների դեմ ատելության խոսքի տարածման գաղափարները հենց ինքը՝ Ռոբերտ Քոչարյանն է գեներացնում:

# ԱԳՐԵՍԻՎ ԼԵԶՈՒ, ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Իրավապաշտպանների դեմ քարոզչության լեզուն գնալով ավելի ագրեսիվ է դառնում, երբեմն դրանք հասնում են բառացի սպառնալիքների: Ամենայն հավանականությամբ դրան նպաստում է նաեւ այն, որ իշխանությունները չեն կարողանում ստեղծել այնպիսի քաղաքական եւ իրավական դաշտ, ինչպես նաեւ այնպիսի հանրային մթնոլորտ, որը զերծ կպահեր իրավապաշտպաններին նման հարձակումներից: Քաղհասարակության ներկայացուցիչների դեմ կիրառվում է ատելության խոսք, նրանց հանդեպ սերմանվում է բացահայտ թշնամանք, ինչպես նաեւ փորձ է արվում ոչ միայն հեղինակազրկել թիրախավորված իրավապաշտպաններին, այլեւ՝ հանրության ընկալման մեջ թույլատրելի դարձնել անձնական վիրավորանքն ու սպառնալիքը: Իրավապաշտպանների դեմ վիրավորանքի, սպառնալիքների, ագրեսիվ խոսքի հետ մեկտեղ հաճախ գործածվում է նաեւ հայհոյանք: Եւ բազմաթիվ լրատվամիջոցներ այդպիսի խոսքը տիրաժավորում են: Քաղհասարակության որոշ ներկայացուցիչներ նման դեպքերում դիմել են իրավապահներին, կամ՝ դատարան, սակայն, ապարդյուն: Օրինակ՝ 2019 թվականի մարտի 11–ին Լարա Ահարոնյանը հաղորդում է տվել ՀՀ Ոստիկանություն՝ հարձակումների, վիրավորանքների և ատելության խոսքի վերաբերյալ՝ պահանջելով գտնել և պատժել իր դեմ հար-

ձակումների պատասխանատուներին Եղել են նաեւ ֆիզիկական հարձակման դեպքեր: Նարեկ Մալյանին հարցաքննել են սպանության սպառնալիքի կասկածանքի շուրջ: Վերջինս, սակայն, հայտարարել է, թե այդպիսով իրենց ցանկանում են լռեցնել, որպեսզի դադարի «խայտառակ բացահայտումները Հայաստանում օտարերկրյա գործակալական ցանցի մասին»: (https://yerevan.today/all/iravakan/46727/narek–malyanin–harcaqnnel–en–spanutyan–sparnaliqi–kaskatsanqi–shurj–pastinfo)

Գյումրիի «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լեւոն Բարսեղյանը պատմում է, թե ինչպես էին ԲՀՀ գրասենյակի մոտ ցույց անողները հայհոյում իր ընտանիքին. «Երբ քո առջև կանգնած ընտանիքիդ 15 րոպե հայհոյում և վիրավորում են, ուզում ես այդ պահին պատին «սվաղել» այդ կենդանիներին, բայց մտածում եմ, որ չարժե: Սա միակ ակցիան չէ, շարունակվելու է, համ էլ վաղուց նարդի չենք խաղացել»: (https://topnews.mediamall.am/?id=214111):

2019 թվականի սեպտեմբերի 27–ին «Բաց հասարակության հիմնադրամները» հայտարարություն է տարածել, որտեղ նշվում է՝ գրասենյակ այցելող բոլոր քաղաքացիները երեք շաբաթ շարունակ հետապնդումների և հոգեբանական ճնշումների են ենթարկվում «ՎԵՏO» նախաձեռնության անդամների կողմից: (https://www.azatutyun.am/a/30187574.html):

Իսկ նոյեմբերի 9–ի լույս 10–ի գիշերը սոցիալական ցանցերում տեսանյութ էր տարածվել, որտեղ երևում էր, թե

ինչպես են անհայտ անձինք կոտրում ավելի շատ որպես «Սորոսի» գրասենյակ հայտնի կազմակերպության դուռը, այնուհետև ներս մտնելով ջարդուփշուր անում գույքը: (https://www.azatutyun.am/a/30942405.html)

Հայհոյախառը խոսքի օրինակ. ՎԵՏՕ նախաձեռնության հիմնադիր Նարեկ Մալյանը գրել է. «Նենց կուզեի Դանիել Իոաննիսյանը մի քանի տղաների հետ գար ինձ տեսնելու: Մենց նայեի հետի տղերքին ու ասեի... –Ընգեր դուք հո բոզի տղեք չե՞ք, էս ու՞մ համար եք եկել հասել մոտս: Հ.Գ. Դանիկի պահով նման հարց չէր առաջանա»: (https://www.facebook.com/narek.malyan/posts/4341369342557930)

«Դատապարտում եմ սորոսի վաստակների հասցեին արված սոց ցանցային քֆրտոցը: Սորոսականներին պետք է քֆրտել ոչ թե սոց ցանցերում այլ իրական կյանքում նայելով նրանց աչքերի մեջ: #սորոսի_վաստակներ»: (https://www.facebook.com/narek.malyan/posts/3144479722246904)

Աննա Ստյոպայի Հակոբյանը Դանիել Իոաննիսյանի մասին գրում է. «Մեր ողբերգությունն այն է, որ սրա պես միաբջիջ կենդանիները քիչ չի ունեն մտքի արտաթորանք, որն անվանում են կարծիք, այլև ունեն այն հրապարակային արտահայտելու հնարավորություն: #Սորոսի_վաստակներ»: (https://www.facebook.com/photo/?fbid=1294093367635602&set=a.145414342503516)

Նարեկ Մալյանը Լևոն Բարսեղյանի մասին. «...Աղջիկը, ով վախ չունի ու առանց զզվանքը թաքցնելու կանգնել ու հարց է տալիս՝ «Պարոն Բարսեղյան, Դուք Ձեր հարսի՞ն եք սիրում...» (https://henaran.am/435011.html):

Նարեկ Մալյանը Արթուր Սաքունցի մասին. «Ուրեմն, Էրդողանին քաղբանտարկյալ հռչակող, օլիգարխ Սորոսից վարձատրվող սաքունցը խոսում է ինքնիշխանությունից: Ըստ սորոսականների ինքնիշխանությունը թուրքի կոշիկները լպստելն ա ու էդ լպստելուց մի քանի դոլար գրանտ փախցնելն ա: Հանգիստ նստիր տեղդ ու սպասիր դատվելուդ սաքունց: #մահ_դավաճաններին»: (https://www.facebook.com/narek.malyan/posts/4306131316081733)

# ԿԼԻՇԵՆԵՐ

Քաղաքացիական հասարակության դեմ ագրեսիվ քարոզչությունն իրականացվում է մի շարք արդեն չարչրկված կլիշեների կիրառմամբ: Հակաքարոզչության իրական պատճառները քողարկելու համար, ներկայացվում են կեղծ՝ կարծրատիպային պատճառներ՝ գրեթե բոլոր դեպքերում կրկնվող բառերով: Իրավապաշտպանների դեմ ագրեսիվ քարոզչությունը «հիմնավորվում» է այսպիսի կեղծ եւ մտացածին պատճառաբանություններով՝ «*նրանք Հայաստանում ջատագովում եւ սերմանում են պղծության քարոզ, սատանիզմ, արշավում են ազգային արժեքների, մեր հավատքի, Հայ առաքելական եկեղեցու դեմ, պրոպագանդում են սեռական փոքրամասնություններին եւ պայքարում ավանդական հայկական ընտանիքների դեմ, վարկաբեկում եւ բարոյազրկում են բանակը, արժեզրկում են պատերազմի հերոսներին, նրանք թուրքական գործակալ են*»:

Հենց այս տեսակ կարծրատիպերը պատահաբար չեն շահարկվում. հայտնի է, որ դրանք բավականին զգայուն թեմաներ են հայ հանրության համար: Բացի դա, հենց այս կարծրատիպերով թիրախավորված հարձակումներ են կատարվում նաեւ այն պատճառով, որ դրանք մեծամասամբ աներեւույթ մեղադրանքներ են, եւ հաճախ դժվար է լինում տրամաբանության, օրենքի, իրավական շրջանակներում հերքել կամ հաստատել այդպիսի մեղադրանքները:

# ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՏՔ

Իրավապաշտպանների դեմ հակաքարոզչական նյութերում վերոնշյալ կարծրատիպերի արանքում հաճախ նկատելի են նաեւ Ռուսաստանի վերաբերյալ հիշատակումներ: Քաղհասարակության ներկայացուցիչներին «օտարերկրյա գործակալներ» անվանողները իրենց վերլուծական նյութերում, հարցազրույցներում, խոսքում հաճախ անթաքույց զայրանում են, հայտարարելով, թե քաղհասարակության այս կամ այն ներկայացուցիչը գործում է Հայաստանի դեմ, քանի որ հակառուսական քարոզչություն է անում, եւ կամ որ բացասական տրամադրություններ է սերմանում ՌԴ–իկամ ՌԴ նախագահի նկատմամբ: Ակնհայտ է, որ որոշ իրավապաշտպանների գործունեությունը Հայաստանյան նախկին իշխանություններին անհանգստացնում է մասնավորապես նաեւ աշխարհաքաղաքական զարգացումների համատեքստում, եւ կամ՝ ռուսական նախասիրությունների տեսանկյունից:

*(«Տարիներ շարունակ այս կազմակերպությունները Ջորջ Սորոսից ֆինանսավորվել են, Հայաստանում ազգային արժեքների դեմ արշավ անելու, սեռական փոքրամասնություններին պրոպագանդելու, բանակը վարկաբեկելու ու բարոյազրկելու, պատերազմի հերոսներին արժեզրկելու, Ռուսաստանի և մասնավորապես Վ.Պուտինի կերպարի դեմ մարդկանց տրամադրելու համար, ինչը մեծ ջանասիրությամբ անում էին նաև պատերազմի ողջ ընթացքում»: https://yerevan.today/heghinak/70569/sorosakannern–*

*aktivanoum–en, «Սպացվում է՝ Բելառուսի դեսպանատան մոտ, նախագահ Լուկաշենկոյից բողոքում էին Նիկոլ Փաշինյանի աջակիցները, այսինքն, հնարավոր է՝ միջնորդավորված ներկայացնում էին նաև Փաշինյանի կարծիքը; Բայց, փաստացի, իր թիմակիցները, նիկոլականների և սորոսականների հետ միասին ակցիա են կազմակերպում ընդդեմ Լուկաշենկոյի քաղաքականության, որին իր աջակցությունն է հայտնել Ռուսաստանի իշխանությունը»:* https://yerevan.today/heghinak/64023/nikol–pashinyany%D5%9D–ynddem–loukashenkoyi–akcianeri–djatagov, «*Ռուսաստանցի բազմաթիվ ազդեցիկ գործիչներ Հայաստանի և այս պատերազմում Հայաստանին աջակցությունից խոսելիս չեն մոռանում հիշատակել, որ մեր երկրում արմատներ է գցել Ռուսաստանի թշնամի Ջորջ Սորոսը, որն իր հիմնադրամով մի շարք հակառուսական նախագծեր է ֆինանսավորում»:* https://yerevan.today/heghinak/67880/grantner%D5%9D–tshnamoun–adjakcoghic%E2%80%A4–incho%D5%9Ev–e–zbaghvats–iravapashtpan–nerkayacogh–qimikosy):

# ԻՆՉՈՒ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ

Ակնհայտ է, որ Հայաստանում քաղհասարակության ներկայացուցիչները իրականում թիրախավորում են ոչ թե այն պատճառաբանություններով, որոնք ներկայացվում են հակաքարոզչական նյութերում, այլ՝ ավելի լուրջ պատճառներով: Քաղհասարակության ներկայացուցիչները թիրախավորվում են իրենց տարիների աշխատանքի համար, որով ժամանակին խանգարել են եւ այսօր էլ շարունակում են խանգարել Հայաստանի նախկին իշխանություններին: Առանձին ոլորտներում առանձին իրավապաշտպանների համար ակտիվությունն է դարձել թիրախավորվելու եւ սեւ քարոզչության, ու ատելության խոսքի կիզակետում հայտնվելու համար:

**1. Լարիսա Մինասյան**

(Բաց Հասարակությունների հիմնադրամների Հայաստանյան գրասենյակի նախկին ղեկավար)

Լարիսա Մինասյանը դարձել էր քաղաքացիական հասարակության դեմ հարձակման, այսպես կոչված. «սորոսականության» դեմ պայքարի եւ հակաքարոզչության խորհրդանիշը: Նրա հանդեպ հարձակումները պիտի խորհրդանշեին պայմանական չար եւ հակահայ Սորոսի հալածանքը,

1. «Գնալու ենք մինչև վերջ, որ Լարիսա Մինասյանը «վալերիանկայից» «պերեդոզ» ստանա»: **Նարեկ Մալյան** https://168.am/2019/05/31/1130265.html
2. «Եթե սորոսական ԶԼՄ-ները կարող են դրոններով, տեսախցիկներով ներխուժել մարդկանց տներ՝ ոտնահարելով մի շարք իրավունքներ և խախտելով օրենքներ, ապա բոլոր ԶԼՄ-ներն այսուհետ կարող են նույն կերպ՝ սորոսականների բնորոշմամբ լրագրողական գործունեության իրականացման շրջանակներում մտնել Հրայր Թամրազյանի, Լարիսա Մինասյանի և այլ սորոսականների շքեղ բնակարաններ, գրասենյակներ, առանձնատներ և իրենց ուզած լրագրողական նյութերը պատրաստել: Հայաստանն իրավական պետություն է, որտեղ չեն կարող լիբերալ ֆաշիզմի հետևորդ սորոսականներն արտոնյալներ լինել և ոտնահարել բոլորիս իրավունքները, հետևաբար կամ թող սովորեն հարգել օրենքներն ու այլոց իրավունքները, կամ էլ մաքուր պահեն իրենց բնակարանները, կարծում եմ՝ քիչ չեն լինի լրագրողներ, ովքեր ցանկություն կունենան լրագրողական գործունեություն իրականացնել իրենց պատկանող տներում և գրասենյակներում»: **Անի Հովհաննիսյան** https://www.facebook.com/1490081131215399/posts/2762856137271219/?d=n
3. «Ես տեղեկություն եմ ունեցել, որ Լարիսա Մինասյանը բավականին կոշտ խոսակցություն է ունե-

ցել վարչապետի հետ և պահանջել է, որ նույնիսկ ապօրինի մեթոդներով արգելեն մեր գործունեությունը, որ իրենք իրենց ադրբեջանասիրական, տրանսվիստիտամարմնավաճառասիրական գործունեությունն անարգել իրականացնեն»: **Նարեկ Մալյանն** https://zham.am/?p=54762&l=am

4. «Եթե սիրում ես բաց թող, եթե քոնն է կվերադառնա... au revoir տիկին Լարիսա, կհանդիպենք, ձեր դատավարության ժամանակ: և հիշեք, ՎԵՏՕ–ն պարտություն չունի»: **Նարեկ Մալյան** https://www.facebook.com/narek.malyan/posts/4428264603868403

**Արթուր Սաքունց**

***(Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ)***

Արթուր Սաքունցը հայտնվել է նախկին իշխանությունների թիրախում մի կողմից «սորոսականության» դեմ պայքարի համատեքստում, մյուս կողմից՝ հատկապես այն պատճառով, որ վերջինս տարիներ շարունակ զբաղվել է բանակում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով, եւ բազմաթիվ անգամներ քննադատել է Ռուսաստանին:

1. «Այս ամիս Էրդողանը Մակունցի աշխատավարձը սխալմամբ փոխանցել է Սաքունցին, Սաքունցինը՝ Մակունցին»: **Երվանդ Վարոսյան**

https://www.facebook.com/yervand.varosyan.5/posts/3897677313623815

2. «Կրթված մարդը պետք է կարողանա տարբերել Մոնեին Մանեից, Պլոտինին Պլատոնից, Կոնտին Կանտից, Հոբսին Ջոբսից, Մակունցին Սաքունցից: Թեև վերջիններիս դեպքում տարբերությունն այդքան էլ մեծ չէ և տարբերելու համար կրթվածության կարիք չկա»: **Անդրանիկ Թևանյան**

https://www.facebook.com/andranik.tevanyan.1/posts/189091922207270

3. «Քանի, որ երբեմնի «իրավապաշտպաններ» դանչոն ու սաքունցները իրենց երազած «Նոր Հայաստանում» լուռ են և երջանիկ, սա դնեմ պատիս, տեսնեք թե ոնց են 12 ոստիկան կես ժամ «հպարտ քաղաքացուն» դաժանաբար ծեծի ենթարկելուց հետո, սայլակով, լրիվ անգիտակից վիճակում, տեղափոխում Մասիվի հիվանդանոց: Ասում ա ՝ սիրում եմ ձեզ իմ հպարտ քաղաքացիներ: Արդար ա՞, ասում են՝ արդար ա»: **Հարություն Հարությունյան**

https://zham.am/?p=94826&l=am

4. «Մեծ սիրով կարդացի ՀՀ ԱԱԾ–ի վերջին հայտարարությունը, որում գերատեսչության ղեկավարությունը ոչ ավանդական սեռական հարաբերությունների նմանվող գործողություն արեց Սաքունցի և ողջ սորոսի վաստակների ցանցի հետ:Այո՛ Հայաստանի Հանրապետության ար-

ժանապատվություն ունեցող սպաների հետ Սաքունցն ու սաքունցները նման տոնով խոսելու իրավունք չունեն, քանի որ վաղը, մյուս օրը նրանք դեռ հանրությանը պետք է պատասխան տան բանակի, ընտանիքի, եկեղեցու դեմ օտարերկրյա գումարներով լկտի արշավ անելու համար»: **Նարեկ Սամսոնյան**
https://www.facebook.com/samsonyan.narek/posts/2810160202380453

5. «–Պարոն Սաքունց, Դավիթ Սանասարյանը մեղադրվում է կոռուպցիոն սխեմայով ծանր հիվանդների դեղերի փողից գողանալու մեջ: Ձեր գարծիքը...

–Դավիթը անմեղ է, բայց քաղաքապետը պետք է հրաժարական տա:
–Իսկ տեղյա՞կ եք, որ Դավիթ Սանասարյանը երեխայի է վրաերթի ենթարկել...
–Չի կարող սորոսականը մեղավոր լինել, բայց քաղաքապետը պետք է հրաժարական տա:
–Պարոն Սաքունց, տեղյա՞կ եք, որ սորոսական Ռեստարտ խուլիգանախումբը մեղադրվում է ծանր հանցագործություն կատարելու մեջ...
–Հարգելիս, սորոսականների նկատմամբ օրենքները չեն գործում: Պահանջում եմ քաղաքապետի հրաժարականը»: **Նարեկ Մալյան**
https://www.facebook.com/narek.malyan/posts/3046095605418650

**Լեւոն Բարսեղյան**

(Գյումրիի Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպության խորհրդի նախագահ)

Իրավապաշտպան Լեւոն Բարսեղյանը եւս թիրախավորվում է ոչ միայն ԲՀՀ հետ առնչություն ունենալու համար, այլեւ մարդու իրավունքների պաշտպանության հարցերով ակտիվ զբաղվելու, ինչպես նաեւ Ռուսաստանին քննադատելու համար:

1. «Գյումրեցի սորոսական Լևոն Բարսեղյանի տղան ուզում է գնալ ադրբեջան և ընկերություն անել ադրբեջանցիների հետ: Կարծում եմ թասիբով գյումրեցիները կկազմակերպեն այս սորոսական տղայի երազանքի իրականացումը: Գյումրեցիները նաև կհիշեն, որ Բարսեղյան Լևոնը ադրբեջանական ֆիլմերի փառատոն էր կազմակերպում Գյումրիում և պայքարում էր ռուսական ռազմաբազայի դեմ... #մահ_դավաճաններին»: **Նարեկ Մալյան**

https://www.facebook.com/narek.malyan/posts/3937606602934208

2. «Սորոսերենից թարգմանեմ. «վարչապետ ջան, Վազգեն Մանուկյանին արխային փակի: Մենք Սորոսի գործակալական ցանցի վարձու իրավապաշտպաններով ամեն ինչ կանենք, որ Վազգեն Մանուկյանին հանկարծ քաղբանտարկյալ չճանաչեն ու դատեն որպես քրեական հանցագործի:

Վարչապետ ջան հյումըն րայց, դիմոքրասի... էդ բառերը ստից բաներ են, իրականում, եթե պետք լինի Վազգեն Մանուկյանի թեմայով պատրաստ ենք նաև կեղծիքների»»: **Նարեկ Մալյան**
https://www.facebook.com/narek.malyan/posts/4319563294738535

3. «...Սակայն 2012–ի վաղ առավոտից Գյումրիի «Ասպարեզ» ակումբը հայտնվեց հայրենասեր երիտասարդների, հատկապես ՀՅԴաշնակցություն կուսակցության անդամների և երիտասարդ երկրապահների շրջափակման մեջ, ովքեր ստիպեցին չեղյալ հայտարարել ադրբեջանական ֆիլմերի փառատոնը: Լևոն Բարսեղյանը և Գեորգի Վանյանը հայտնվեցին քաշքշուքի մեջ, որտեղ նրանք մի քանի անգամ «կերան» լավ «չռփոցներ»»: Երկիր կայք. ՀՅԴ լրատվամիջոց
https://www.yerkir.am/news/view/186228.html

4. «Բարի օր, այս լուսանկարը լրիվ մեր օրերի խորհրդանիշն է: Սպիտակ մեքենան Լարիսա Մինասյանինն է, կողքը աչքերը չռածը՝ Սորոսի գրասենյակի վարորդն է՝ Աշոտը, ոստիկանը՝ ում տարիներ շարունակ պատվերով հայհոյել է սորոսական Լևոնը, իսկ այսօր վախից կուչ է եկել ոստիկանի մոտ և փրկություն է աղերսում, ադրբեջանասեր Բարսեղյան Լևոնին չներկայացնեմ ամբողջ Գյումրին ծիծաղում է նրա վրա: Գյումրիում գլուխը

կախ է ման գալիս, Երևան գալուց է մեկ–մեկ առյուծ կտրում, սա այդ պահերից մեկն է: Եվ վերջապես աղջիկը, ով վախ չունի ու առանց զգվանքը թաքցնելու կանգնել ու հարց է տալիս՝ «Պարոն Բարսեղյան, Դուք Ձեր հարսի՞ն եք սիրում…» Բարսեղյան Լեոնն ա, սորոսի փողերով ադրբեջանն էլա սիրել: #սորոսի_վաստակներ»: **Նարեկ Մալյան**

https://henaran.am/435011.html

**Լուսինե Հակոբյան**

(«Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան կազմակերպության նախագահ, փաստաբան)

Իրավապաշտպան Լուսինե Հակոբյանը թիրախավորվում է թե իրավական եւ քաղաքական հարցերում ցուցաբերած ընդհանուր ակտիվության համար, այնպես էլ՝ առանձին հայտնի գործերով ունեցած դերակատարության համար. «Հարսնաքարի» սպանություն, «Մարտի 1», «Պողոս Պողոսյանի սպանություն», «Հաց Բերողի գործ» եւ այլն:

1. «Վերջին երկու տարիներին հեռուստաէկրաններից չիջնող, Իրավունքի Եվրոպա անունով կազմակերպություն ղեկավարող, ընտանեկան բյուջեն էլ արդեն երկու տարուց ավել Մարտի 1–ի

հաշվին համալրող սույն տիկինը որոշել է ադրբեջանցիների հետ «փոխանակումներ» անել: Եվ նա մեր երկրի ապագա Սահմանադրության ոչ պաշտոնական մշակողներից է»: **Գեղամ Մանուկյան**

https://www.facebook.com/gegham.manukyan.16/posts/10220652446633416

2. «Եվ հիմա, փաստորեն, ունենք իրավիճակ, երբ իրեն իրավապաշտպան ներկայացնող տիկինն առաջարկում է Ադրբեջանին հանձնել իր համար անհաճո անձանց, հայ մարդկանց, մարդկանց, ովքեր այս երկրի համար արժեք են ստեղծել, մասնակցել պետականաշինությանը, քարը քարին դրել, ի տարբերություն այսօր ճամարտակող շատ–շատերի: Իրականում արտառոցն այս գրառման բովանդակությունն ու դրա հեղինակի բառամթերքը չեն, այլ այն, որ մինչ այս պահն այդ գրառումն առկա է Լուսինե Հակոբյանի ֆեյսբուքյան էջում, մինչդեռ ընդդիմադիր շրջանակների ու լրատվամիջոցների ամենաանմեղ հրապարակումներն անգամ ակնթարթորեն արժանանում են հայրենի իշխանությունների ուշադրությանը՝ դրանից բխող հետևանքներով»: **168.am**

https://168.am/2020/10/21/1390948.html?fbclid=IwAR04ttGHiBDpXwa71Ua0TiMo9G–vsGyoBZdMc6RG2sP2kGNLMOG–xq2gCvY

3. «Առանձնակի զվարճալի է կողքից նայել, թե ոնց

են Վահե Գրիգորյանի հետ քավոր–սանիկական հարաբերությունների մեջ գտնվող փաստաբան ամուսիններ Տիգրան Եգորյանն ու Լուսինե Հակոբյանը շնչակտուր վազում իշխանական այս կայքից այն կայքը՝ փորձելով իշխանությանը ձեռնտու արձագանքներ երկնել Վենետիկի հանձնաժողովի արձանագրության վերաբերյալ: Ընդ որում, արձագանքներն այն աստիճան սպռնտան ու անտրամաբանական են, որ Լուսինե Հակոբյանը հարցազրույցներից մեկում անգամ կասկածի տակ էր դրել, որ արձանագրությունը Վենետիկի հանձնաժողովն է կազմել: Լրջացեք, տիկնայք ու պարոնայք, լըր–ջա–ցեք»: **Նարեկ Սամսոնյան**
https://www.facebook.com/samsonyan.narek/posts/2512277662168710

4. Եվրոպական ինչեղ անվանմամբ կազմակերպության տիկինը արդեն առնվազն երկրորդ անգամ, իր «եվրոպական» բարձունքից պատիվ է արել անդրադառնալ իմ տեսակետներին: Առաջին անգամ, նա մահացու հանցագործություն էր համարել 2015թ. սահմանադրական քննարկումների ժամանակ Հրայր Թովմասյանի կողքին նստելը: Այս անգամ սույն եվրոտիկինն արդեն մի շարք կետերով է փորձում ինձ ջախջախել: Կանդրադառնամ միայն նրա առաջադրած, կարծում եմ, հիմնական մեղադրանքին, այն ՝ Իշխանյանը, լինելով իրավապաշտպան, «այո» քվեարկողներին

անվանում է «անգիտակից ամբոխ»: Կուզենայի եվրոտիկնոջը հիշեցնել, որ հայ ժողովրդի ամենամեծ մարդասեր Հ. Թումանյանը, անգիտակից զանգվածին, ոչ թե նույնիսկ ամբոխ է անվանել, այլ խուժան.... **Ավետիք Իշխանյան**
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=817076265458394&id=100014680840236

**Դանիել Իոաննիսյան**

(Իրազեկ քաղաքացիների միավորում հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող)

Դանիել Իոաննիսյանը ամենաթիրախավորված իրավապաշտպաններից մեկն է, դրան նպաստում է նաեւ այն, որ Իոաննիսյանը բազմաթիվ ոլորտներում է ակտիվություն ցուցաբերում:

1. «Դանիկ, Սծյուպա, Առաջին տիկնոջ Ժ/Պ Արման Բաբաջանյան, Սաքունց, մաքունցներ և այլ սորոսի վաստակներ, դատախազության խոսնակը ձեր մասին գրառում է արել: Կարդացեք ու ականջներիդ օղ արեք...»: **Նարեկ Մալյան**
https://www.facebook.com/narek.malyan/posts/4384615308233333
2. «Մենք թուրքին չէինք պատկերացնում Արծրուն Հովհաննիսյանի, Դանիել Իոաննիսյանի, Արարատ Միրզոյանի տեսքով...»: **Նարեկ Մալյան**

https://zham.am/?p=94816&l=am

3. «Դանիկը կարծես թազա գրանտ ա ստացել ու լծվել ստերի տարածման գործին:

Daniel Ioannisyan, այսօր այն օրն է, որ գրածդ պիտի ապացուցես: Փաստերով ապացուցում ես, որ Քոչարյանը երբևիցե «տանկեր է հանել ժողովրդի դեմ» ու «ազգի հաշվին հարստացել է»: Դա կրկին լկտի ու մերկապարանոց սուտ է և ապացուցել դա դու չես կարող: 2,5 տարիա սոռոսականներով իշխանության եք, բայց ձեր տարիներով տարածած ստերից ոչ մեկը այդպես էլ չապացուցեցիք»: **Քրիստինա Նազարյան**

